ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

22/11/2021

ՈՐՈՇՈՒՄ N 110-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 143–րդ հոդվածի 5-րդ, 8-րդ, 9-րդ մասերի դրույթներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի գլխավոր հատակագծում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքայի սեփականություն հանդիսացող հողերից 0,1046հեկտար հողատարածքը որից՝ անտառային, ջրային և պահուստային հողերից <<ջրային հողեր>> գործառնական նշանակության 0,00481 հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0229-0004-ից), բնակավայրերի հողերից «այլ հողեր» գործառնական նշանակության 0,06829 հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0229-0001-ից), բնակավայրերի հողերից «այլ հողեր» գործառնական նշանակության 0,02684 հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0229-0003-ից) և գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք՝ 0.00469 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0685-0001-ից) փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողեր կատեգորիայի «պատմական և մշակութային հողեր» գործառնական նշանակության հողերի՝ Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված զինծառայողների և մարտական գործողությունների մասնակիցների հուղարկավորությունը կազմակերպելու համար հուշահամալիր (պանթեոն) կառուցելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԼԱՋԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՄԱԼՈՒՆՑ ԵՐՎԱՆԴ

ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ

ՅՈԼՅԱՆ ԻՐԻՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՏՅՈՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

2021թ. Նոյեմբերի «24»
ք.Գորիս